# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 202–Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Մեծամոր համայնքի համայնքային ենթակայությամբ գործող նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների վարձավճարների 2025 թվականի համար արտոնությունների չափանիշները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N1- N2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված N
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
դեկտեմբերի 13-ի N 202-Ա որոշման

# ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

1.1) Մեծամոր համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի՝ 2025 թվականի համար սահմանված դրույքաչափի նկատմամբ կիրառվում է զրոյական դրույքաչափի արտոնություն, եթե երեխայի ծնողները կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Մեծամոր համայնքում և՝

ա. երկկողմանի ծնողազուրկ երեխա է

բ. 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ծնողի երեխա է

գ. նպաստառու ընտանիքի երեխա է

2) Մեծամոր համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի՝ 2025 թվականի համար սահմանված դրույքաչափի նկատմամբ կիրառվում է 50% նվազեցման արտոնություն, եթե երեխայի ծնողները կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Մեծամոր համայնքում և՝

ա. միայնակ մայրերի և միակողմանի ծնողազուրկ երեխաների համար

բ. ընտանիքի երեք և ավելի անչափահաս երեխաներից միևնույն նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երկու և ավելի երեխաների համար

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված դեպքերում՝

օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, երեխայի ծնողների մահվան վկայականների պատճենները, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին.

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որոշման պատճենը, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին.

3) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, նպաստառու լինելու մասին տեղեկանքը, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին.

4) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, ՔԿԱԳ բաժնի տեղեկանքը՝ երեխայի ծննդյան վկայականումծնողի մասին տեղեկություններ մտցնելու հիմքի վերաբերյալ, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին.

5) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, երեխայի ծնողի մահվան վկայականի պատճենը, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին.

6) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, տեղեկանք երեխաների միևնույն նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելու վերաբերյալ, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:

**Աշխատակազմի քարտուղար** **Մ. Հովհաննիսյան**

Հավելված N 2

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
դեկտեմբերի 13-ի N 202 -Ա որոշման

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Մեծամոր համայնքի ենթակայության արտադպրոցական ուսումնական հաստատությունների (երաժշտական, արվեստի դպրոցներ, մարզադպրոց և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի՝ 2025 թվականի համար սահմանված դրույքաչափի նկատմամբ կիրառվում է զրոյական դրույքաչափի արտոնություն, եթե երեխայի ծնողները կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Մեծամոր համայնքում և՝

ա. երեխայի ծնողը ազատամարտիկ է և (կամ) զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամ է,

բ. անհայտ կորած զինծառայողի երեխա է

գ. երկկողմանի ծնողազուրկ երեխա է

դ. 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ծնողի երեխա է

ե. հաշմանդամ երեխա է

զ. նպաստառու ընտանիքի երեխա է

1) Մեծամոր համայնքի ենթակայության արտադպրոցական ուսումնական հաստատությունների (երաժշտական, արվեստի դպրոցներ, մարզադպրոց և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի՝ 2025 թվականի համար սահմանված դրույքաչափի նկատմամբ կիրառվում է 50% նվազեցման արտոնություն, եթե երեխայի ծնողները կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Մեծամոր համայնքում և՝

ա. միայնակ մայրերի և միակողմանի ծնողազուրկ երեխաների համար

բ. ընտանիքի երեք և ավելի անչափահաս երեխաներից միևնույն նախադպրոցական կամ արտադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երկու և ավելի երեխաների համար

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը՝

1) Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, երեխայի ծնողի կամ ծնողների մահվան վկայականի պատճենը, համապատասխան փաստաթուղթ մարտական

գործողություններին մասնակից լինելու մասին, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:
2) Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, անհայտ կորած լինելու մասին համապատասխան փաստաթուղթ, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:
3) Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում նշված դեպքերում՝ օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, երեխայի ծնողների մահվան վկայականների պատճենները, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:
4)Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «դ» և «ե» պարբերություններում նշված դեպքերում՝
Երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որոշման պատճենը, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:
5) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունում նշված դեպքերում՝
Երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջին իս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, նպաստառու լինելու մասին տեղեկանքը, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:
6) Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, ՔԿԱԳ բաժնի տեղեկանքը՝ երեխայի ծննդյան վկայականում ծնողի մասին տեղեկություններ մտցնելու հիմքի վերաբերյալ, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:
7) Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, երեխայի ծնողի մահվան վկայականի պատճենը, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:
8) Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, տեղեկանք երեխաների՝ միևնույն նախադպրոցական կամ արտադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելու վերաբերյալ, տեղեկանք բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու մասին:

**Աշխատակազմի քարտուղար** **Մ. Հովհաննիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 203-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԹՈՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և հիմք ընդունելով սույն թվականի դեկտեմբերի 4-ին Մեծամոր համայնքի Զարթոնք բնակավայրում կայացած հանրային քննարկման բացասական արձանագրությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ նախնական անհամաձայնություն "Սարգիս Մանուկյան" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Մեծամոր համայնքի Զարթոնք բնակավայրում կատարելու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 204-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԳԱՎԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և հիմք ընդունելով սույն թվականի նոյեմբերի 14-ին Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրում կայացած հանրային քննարկման դրական արձանագրությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ նախնական համաձայնություն «ԱՐ-ԼԻ Ավազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրում կատարելու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 205-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, 245-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1213-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնությունների տրամադրման փաստաթղթերի ուսումնասիրման հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 15 արձանագրությունը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող գույքի մասով սահմանել անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ՝ համաձայն N 1 և 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
դեկտեմբերի 13-ի N 205-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| հ/հ | Ազգանուն Անուն | ՀԾՀ | Անշարժ գույքի գրանցման հասցե | Անշարժ գույքի կադաստրային ծածկագիր | Հարկի նվազեցման չափը/դրամ/ | Նախաձեռնությունը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վայա Ավետիսյան | 5107494080 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Բամբակաշատ բնակավայր | 04-031-0188-0012 | 45439/քառասունհինգ հազար չորս հարյուր երեսունինը/ | հանձնաժողով |
| 2 | Սայաթ Գևորգյան | 2107600252 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Ջանֆիդա բնակավայր | 04-083-0201-0026 | 10319/տասը հազար երեք հարյուր տասնինը/ | հանձնաժողով |
| 3 | Սայաթ Գևորգյան | 2107600252 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Ջանֆիդա բնակավայր | 04-083-0253-0010 | 24139/քսանչորս հազար հարյուր երեսունինը/ | հանձնաժողով |
| 4 | Սայաթ Գևորգյան | 2107600252 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Ջանֆիդա բնակավայր | 04-083-0012-0001 | 28684/քսանութ հազար վեց հարյուր ութսունչորս/ | հանձնաժողով |
| 5 | Տիգրան Խաչատրյան | 1404810102 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Եղեգնուտ բնակավայր | 04-039-0224-0011 | 150000/մեկ հարյ ուր հիսուն հազար/ | հանձնաժողով |
| 6 | Հռիփսիմե Ասատրյան | | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նալբանդյան բնակավայր | 04-070-0017-0008 | 49109/քառասունինը հազար հարյուր ինը/ | հանձնաժողով |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7 | Սիրանուշ Հովսեփյան | | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Մեծամոր բնակավայր | 04-003-0050-0001-001-005 | 2507/երկու հազար հինգ հարյուր յոթ/ | հանձնաժողով |
| 8 | Մերուժան Երանոսյան | 009273095 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Բամբակաշատ բնակավայր | 04-031-0179-0004 | 69735/վաթսունինը հազար յոթ հարյուր երեսունհինգ/ | հանձնաժողով |
| 9 | Արկադի Մխիթարյան | 4108820134 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Արմավիր բնակավայր | 04-020-0134-0013 | 12155/տասներկու հազար հարյուր հիսունհինգ/ | Հանձնաժողով |
| 10 | Արկադի Մխիթարյան | 4108820134 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Արմավիր բնակավայր | 04-020-0137-0050 | 24344/քսանչորս հազար երեք հարյուր քառասունչորս/ | հանձնաժողով |
| 11 | Արկադի Մխիթարյան | 4108820134 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Արմավիր բնակավայր | 04-020-0139-0001 | 13501/տասներեք հազար հինգ հարյուր մեկ/ | հանձնաժողով |
| 12 | Վարդան Դավթյան | 2905630140 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նալբանդյան բնակավայր | 04-070-0020-0018 | 14425/տասնչորս հազար չորս հարյուր քսանհինգ/ | հանձնաժողով |
| 13 | Պետրոս Պետրոսյան | | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Եղեգնուտ բնակավայր | 04-039-0040-0010 | 16545/տասնվեց հազար հինգ հարյուր քառասունհինգ/ | հանձնաժողով |
| 14 | Պետրոս Պետրոսյան | | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Եղեգնուտ բնակավայր | 04-039-0059-0022 | 94903/իննսունչորս հազար ինը հարյուր երեք/ | հանձնաժողով |
| 15 | Մարետա Թադևոսյան | 7511500515 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նորապատ բնակավայր | 04-075-0049-0010-001 | 100000/մեկ հարյուր հազար/ | հանձնաժողով |

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

Հավելված N2
Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
դեկտեմբերի 12-ի N 205-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| հ/հ | Ազգանուն Անուն | ՀԾՀ | Հաշվառման հասցե | Փոխադրամիջոցի մակնիշը , պետհամարանիշը | Հարկի նվազեցման չափը/դրամ/ | Նախաձեռնությունը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ռադիկ Մանուկյան | 1308550375 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Ամասիա բնակավայր | VAZ 21063 35MD710 | 41616/քառասունմեկ հազար վեց հարյուր տասնվեց/ | հանձնաժողով |
| 2 | Ռադիկ Մանուկյան | 1308550375 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Ամասիա բնակավայր | GAZ24 34QZ527 | 110918/մեկ հարյուր տասը հազար ինը հարյուր տասնութ | հանձնաժողով |
| 3 | Անատոլի Հակոբյան | 2608490182 | ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Ալաշկերտ բնակավայր | GAZ24 36PT128 | 9956/ինը հազար ինը հարյուր հիսունվեց/ | հանձնաժողով |

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 206-Ա

## 54,8 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ԲՆԱԿԱՐԱՆԻ) ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի սեփականությունը համարվող (սեփ. վկայական N 12112024-04-0075) Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 6/3 շենքի 4 բնակարան հասցեի 54,8 քմ մակերեսով բնակարանը նվիրատվությամբ տրամադրել Գոհար Թելմանի Ստեփանյանին, Մանվել Արշավիրի Ռշոյանին, Արմեն Մանվելի Ռշոյանին և Արման Մանվելի Ռշոյանին՝ հավասար բաժնային իրավունքով:

2. Նվիրառուների հետ սահմանված կարգով կնքել նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 207-Ա

### ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 04-027-0119-0214 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ» ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 151-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը) ենթակետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Մաքուր Ավազ» ՍՊԸ-ի 2024 թվականի հոկտեմբերի 8-ի գրությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից «Մաքուր ավազ» ՍՊԸ-ին տրամադրված 2023 թվականի հոկտեմբերի 27-ի N ՇԱԹ 29/721 թույլտվությունը, 2023 թվականի հոկտեմբերի 27-ի N L-721 լեռնահատկացման ակտը ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Մեծամոր համայնքի Գյուղ Արևիկ-Եղեգնուտի խճուղի 4 հասցեում գտնվող Մեծամոր համայնքի սեփականությունը հանդիսացող 19,65754 հա 04-027-0119-0214 ծածկագրով, արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության հողամասը առանց մրցույթի 20 (քսան) տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել «Մաքուր ավազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Հողամասի վարձակալության վճարի չափը սահմանել տարեկան 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 18-ի «Մեծամոր համայնքի սեփականությունը հանդիսացող 04-027-0119-0214 կադաստրային ծածկագրով հողամասը առանց մրցույթի «Մաքուր ավազ» ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրելու մասին» N 151-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 208-Ա

## 0,6249 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, և հիմք ընդունելով Արտավազդ Արշալույսի Մաղաքյանի 2024 թվականի դեկտեմբերի 2-ի դիմումը ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեծամոր համայնքի Մարգաշատ բնակավայրում Արտավազդ Արշալույսի Մաղաքյանին սեփականության իրավունքով պատկանող 0,6249 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության Այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի (սեփ. վկայական N 19112024-04-0037, ծածկագիր 04-067-0705-0029) նպատակային և գործառնական նշանակությունները փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ պտուղ-բանջարեղենի չորանոցի և պարսպի կառուցման համար:

2. Փոփոխված 0,6249 հա հողամասը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 209-Ա

## 0,31171 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, և հիմք ընդունելով Մահմադ Ալոյի Միրզոյանի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրում Մահմադ Ալոյի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող 0,31171 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի (սեփ. վկայական N 15052024-04-0099, ծածկագիր 04-092-0071-0013) նպատակային և գործառնական նշանակությունները փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ անասնաշենքի և պարսպի կառուցման համար:

2. Փոփոխված 0,31171 հա հողամասը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 210-Ա

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 04-092-0069-0066 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը) ենթակետով, և հիմք ընդունելով «Մաքուր Ավազ Պլյուս» ՍՊԸ-ի գրությունը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից «Մաքուր ավազ Պլյուս» ՍՊԸ-ին տրամադրված 2024 թվականի սեպտեմբերի 24-ի N ՇԱԹ 29/747 թույլտվությունը, 2024 թվականի սեպտեմբերի 24-ի լեռնահատկացման N Լ-747 ակտը ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրում գտնվող Մեծամոր համայնքի սեփականությունը հանդիսացող 6,807308 հա 04-092-0069-0066 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը առանց մրցույթի 20 (քսան) տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել «Մաքուր ավազ պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Հողամասի վարձակալության վճարի չափը սահմանել տարեկան 700 000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 211-Ա

## 0,24758 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թականի դեկտեմբերի 2-ի N 2/փ-172 եզրակացությունը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 3-րդ թաղամաս 1/36 հասցեում գտնվող Արկադի Հովհաննիսյանին և Կարեն Հունանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,24754 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության տրանսպորտի գործառնական նշանակության հողամասի /սեփ. վկայական N 18042024-04-0067, կադ.ծածկագիր 04-003-0029-0024/ նպատակային և գործառնական նշանակությունները փոխել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության հողամասի:

2. Փոփոխված 0,24754 հա հողամասը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**